

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
տ.գ.դ., պրոֆեսոր

ԱԼՎԱՐԴ ՍԱՐԳՍՅԱՆ
տ.գ.թ., դոցենտ

ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
տ.գ.թ., դոցենտ

ԼԵՎՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ
տ.գ.թ., ասիստենտ

ԽՈՇՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆԱ ԱՅԼԵՇՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈԴԵԼԸ¹

Ֆինանսական հաշվառման ներդրման գուգահեռ ՀՀ-ում նոր որակական հատկանիշներ է ստանում հաշվապահական տեղեկատվությունը: Ներկայումս հաշվապահական հաշվառման հիմնարար մոտեցումները սահմանվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Սակայն ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտների (ՖՀՍՍ) որդեգրումը չի նշանակում, որ հաշվապահական հաշվառման համակարգի բոլոր հիմնահարցերը ստանում են իրենց պատասխանները: Առհասարակ ֆինանսական հաշվառման հիմնարար մոտեցումներից մեկն այն է, որ ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով, կամ արժեքի չափման այլ մոտեցմամբ, սակայն ոչ վաճառքի գներով: Կան մոտեցումներ, որոնց համաձայն բացահայտվում են որոշակի ակտիվների իրական արժեքները, սակայն նրանք չեն ծառայում որպես հաշվառման հիմք: Ներկայիս տնտեսական զարգացումները առևտրի ոլորտում հանգեցրեցին մի շարք փոփոխությունների, օրինակ, խոշոր առևտրային ցանցերի ձևավորումը, առևտրի ոլորտում հաշվառման ավտոմատացումը և այլն, որոնք իրենց հերթին ել նոր խնդիրներ են առաջ դնում հաշվապահական հաշվառման համակարգի առջև: Հաշվառման տեսանկյունից նման խնդիր դարձավ տեղեկատվական համակարգերի մասնակի կամ բացարձակ ինտեգրումը հաշվապահական գործընթացների մեջ: Տնտեսության մեջ տեղեկատվական համակարգերի առաջին կիրառությունները եղել են հաշվապահական հաշվառման ոլորտում: Ներկայումս տեղեկատվության շրջանառության ձևերի զարգացումները հրամայական են հանդիսանում հաշվապահական հաշվառման համակարգերի նոր որակի՝ տեղեկատվական-վերլուծական համակարգերի ստեղծման համար: Ժամանակակից պահանջներին բավարարող տեղեկատվական համակարգը նախատեսված է ոչ միայն հաշվապահական տեղեկատվական հոսքերի պարզագույն մշակման և ներկայացման համար, այլ ներառում է տրամարանական և գիտական բաղկացուցիչ, որը նպաստում է առավել արդյունավետ կառավարչական որոշումների ընդունմանը և կառավարչական հաշվառման հիմնախնդրների լուծմանը: Բացի այդ, աստիճանաբար կանոնակարգվում էին առևտրի ոլորտում գործարար փոխհարաբերությունները և առևտրի կազմակերպման մոտեցումները: Եթե 15-20 տարի առաջ դժվար էր պատկերացնել առևտրի գործընթացը առանց սակարկման, ապա ներկայումս առավել դժվար է պատկերացնել առևտրի սրահ առանց հստակ գնաճշման: Փոխվեցին նաև ապրանքաշրջանառության կազմակերպման ձևերը, դառնալով հնարավորինս տարանջատված: Նման և շատ հանգամանքների արդյունքում առևտրի ոլորտում ձևավորվեցին հաշվառման առանձնահատկություններ, որոնք գտան իրենց օպտիմալ լուծումները: Այդպիսի

¹ Հողվածը ներկայացված է ՀՊՏՀ 2013թ. ներքին դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

առանձնահատկություններից ամենակարևորն այն է, որ ապրանքային հաշվառումը կրեց երկշերտ բնույթ: Առաջին հարթությամբ այն հաշվառվում է ինքնարժեքի սկզբունքով, իսկ մյուս հարթությամբ՝ վաճառքի գների սկզբունքով: Նշվածներից մեկը կամ մյուսը չեն նսեմացնում մյուսի կարևորությունը, քանի որ դրանցից յուրաքանչյուրը ունի իրեն հատուկ գործառություները:

Այսպես, հարկային և ֆինանսական հաշվառման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ապրանքային հաշվառման վարումը ինքնարժեքի հարթությամբ, իսկ ներքին վերահսկողության կամ կառավարչական հաշվառման տեսանկյունից նաև կարևոր է հաշվառումը վաճառքի գներով:

Հաստ հաճախ ապրանքային հաշվառումը վաճառքի գներով կոչվում է մանրածախ հաշվառման մերորդ: Մանրածախ բառը պատահական չէ, քանի որ այս մերորդը իր լավագույն կիրառությունը գտնում է մանրածախ ապրանքաշրջանառության ոլորտում:

Մանրածախ մերորդը հաշվառումը, դա այնպիսի հաշվապահական գործընթացների, գրանցումների, հաշվարկների և հաշվետվությունների համակարգված ամբողջություն է, որի հիմքում ընկած է ապրանքային մնացորդը և շրջանառությունը վաճառքի գներով հաշվառելու սկզբունքը:

Հարց է ծագում, թե ինչպիսի հանգամանքներում հաշվառման, որ սկզբունքները որքանով են արդյունավետ և որքանով են նպատակահարմար:

Այսպես, առևտրի ոլորտում տնտեսվարող կազմակերպությունների գործունեությունը պայմանականորեն կարելի է տարանջատել երեք ուղղությունների՝

1. մեծածախ,
2. մանրամեծածախ,
3. մանրածախ:

Մեծածախ ապրանքաշրջանառությունը կարելի է բնութագրել հետևյալ հատկանիշներով՝ առկա է առևտրային բազա կամ պահեստ, որտեղ տեղակայված են ապրանքային մնացորդը, որտեղից էլ կազմակերպվում է իրացումը: Գնորդները հիմնականում միջնորդ կազմակերպություններն են, գնային քաղաքականությունը կախված է խմբաքանակից, առաքման վայրից, վճարման ժամանակագրությունից: Ինչպես նաև կարևոր է հիշել, որ վճարահաշվարկային փաստաթուղթը համարակալված է հաշիվ -ապրանքագիրը:

Մանրածախ ապրանքաշրջանառությունը ի տարբերություն մեծածախի, ունի որոշակի առանձնահատկություններ, այսպես՝

- առկա է առևտրային սրահ, անկախ պահեստային տարածքից,
- վաճառահանված ապրանքները հստակորեն գնանշված են,
- գնանշումից զատ կարող են գործել սահմանված գեղշեր,
- գնորդների շրջանակը ազատ է,
- գնորդները կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք,
- անդեմ գնորդի հետ վճարահաշվարկային փաստաթուղթ հանդիսանում է ՀԴՄ կտրոնը,
- իրացման գործընթացը զուգորդում է անհապաղ վճարմամբ:

Մանրամեծածախ ապրանքաշրջանառության պարագայում կարող են համապատասխան վերջիններիս յուրահատուկ հատկանիշները:

Գործունեության առանձնահատկությունների տարանջատումը իր հերթին առաջացնում է նաև հաշվառման մոտեցումների առանձնահատկությունները: Մանրածախ և մանրամեծածախ բնագավառների դեպքերում առավել նպատակահարմար է կիրառել նաև հաշվառման մանրածախ մերորդը:

Ինչպիսի մերոդ էլ ընտրվի, այն ունի հետևյալ նպատակը՝ ապրանքային մնացորդի և շրջանառության արժեքային գնահատումը: Ապրանքային պաշարների հաշվապահական հաշվառման հիմնական խնդիրը՝ իրացված կամ սպառված միավորների ինքնարժեքի որոշումն է: Ապրանքային պաշարների ինքնարժեքի որոշման մերոդները սահմանված և նկարագրված են ՀՀՄ 2 «Պաշարներ» ստանդարտում: Առհասարակ իրացված պաշարների ինքնարժեքի որոշման բանաձևի ընտրությունը կախված է հետևյալ հարցից՝ արդյոք ապրանքային պաշարները փոխադարձ փոխարկելի են, թե ոչ: Փոխադարձ փոխարկելի պաշարների ինքնարժեքի որոշման համար կարող են կիրառվել ԱՍԱԸ և միջին կշռված մերոդները: Ինչպես ստանդարտը որոշակի հանգամանքներում քույլատրում է կիրառել նաև ինքնարժեքի որոշման մանրածախ մերորդը և ստանդարտ ծախսումների մերոդները: Վաճառված

(իրացված կամ այլ ելքագրված) ապրանքների ինքնարժեքի որոշումը հավելագնի մեթոդով ենթադրում է, որ առկա է առևտրային հավելագնի հարաբերականորեն կայուն տոկոսադրույթ:

Այն կարող է կիրառվել հետևյալ նպատակներով՝

- իրացման ծավալի նկատմամբ՝ ինքնարժեքի որոշման նպատակով,
- իրացման ծավալի նկատմամբ՝ համախառն շահույթի որոշման նպատակով,
- վաճառքի զներով արտահայտված ապրանքային մնացորդի նկատմամբ՝ մնացորդի ինքնարժեքի զնահատման համար,
- ինքնարժեքով արտահայտված ապրանքային մնացորդի նկատմամբ՝ մնացորդի գումարը վաճառքի զներով որոշելու համար և այլն:

Սովորաբար, այս մեթոդը կիրառվում է վաճառված ապրանքների ինքնարժեքի որոշման համար, հաշվառման այս մեթոդը իր կիրառությունը գտնում է հիմնականում առևտրային սրահներում՝ հաշվառման գործընթացների պարզեցման համար: Սի ժամանակաշրջանից մյուսը առավել հեշտ է գրանցել ձեռքբերումները, արտահայտված վաճառքի զներով, և հաշվառել իրացումից հասույթը, քանի որ որոշել վաճառված ապրանքների ինքնարժեքը:

Հավելագնի մեթոդի կիրառությունը նպատակ է հետապնդում հեշտացնել հաշվառման գործընթացը և հիմք է ծառայում ապահովել ապրանքային մնացորդի փաստացի գույքագրման արդյունքների համադրումը հաշվառված մնացորդի հետ: Այս մեթոդի դեպքում հաշվառման վարման համար պարտադիր չեն ապրանքային քարտում անալիտիկ գրանցումները: Առևտրային հավելագնի միջոց մանրածախ մեթոդը հիմնականում կիրառվում է փոքր թիգնեաում:

Խոչոր առևտրային ցանցերում ապրանքային պաշարների հաշվառումը առաջ է բերում այլ խնդիրներ, որոնց լուծման գրավական տեսնում ենք մանրածախ մեթոդի առաջարկվող գործիքակազմը: Մանրածնեածախ առևտրի ոլորտում հաշվառման ներդրման սկզբունքները և ներքին վերահսկողության վարման կանոնների ընտրության մեջ կիրառելով մանրածախ մեթոդի գործիքակազմը կտտեղծվի այլընտրանքային հակակշիռ գոյություն ունեցող տեղեկատվական աղբյուրներին: Իսկ նրա հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ այդպիսի տեղեկատվական հոսքը կարելի է ձևավորել իրարից անկախ միավորներից:

Մանրածնեածախ առևտրի ոլորտի առանձնահատկությունը հաշվի առնելով՝ յուրահատուկ են նաև հաշվառման վարման մոտեցումները: Ուսումնասիրելով առևտրային հավելագնի տոկոսադրույթի կիրառության եղանակները հաշվառման տեսանկյունից ակնհայտ է դառնում այն փաստը, որ եթե նման տոկոսադրույթը լինի փոփոխական և դժվար որոշելի, ապա վերջինիս կիրառությունը կինի ոչ նպատակահարմար: Հետևաբար, ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է վարել երկու տարրեր հաշվառումներ՝ մեկը ըստ ինքնարժեքների, մյուսը ըստ վաճառքի զների:

Սակայն մինչև հաշվառման ներդրման և գործընթացների նկարագրությանը, փորձենք ձևակերպել թե ինչ խնդիրներ պետք է լուծել հաշվառման միջոցով:

Նախ մանրածնեածախ առևտրի ոլորտի զարգացումը հանգեցրեց առևտրային ցանցերի ձևավորմանը: Ներկայում գորեք բոլոր վաճառակետերը հանդիսանում են առևտրային ցանցի միավորներ: Գործունեության նման կազմակերպումը ունի մի շարք առավելություն աշխատանքի կազմակերպման, մենեօնների, լոփատիկայի, մարդեթիմների և վերահսկողության տեսանկյուններից: Հաշվասահական հաշվառման տեսանկյունից առավել կարևորություն ունի ներքին վերահսկողության միջտ կազմակերպումը: Վերջինս անհնար է իրականացնել առանց համապատասխան հաշվապահական տեղեկատվության, իսկ տեղեկատվության օրինակներ են՝ ապրանքային քարտերը, ապրանքային մնացորդը արտահայտված քննութեան արտահայտությամբ և, իհարկե, ապրանքային մնացորդը արտահայտված վաճառքի զներով: Գույքագրումների կամ ստուգումների իրականացումը անփոփում է հենց փաստացի մնացորդների համադրությամբ ապրանքային մնացորդը արտահայտված վաճառքի զներով: Այսպիսով, ակնհայտ է, որ հաշվառման արդյունքով ձևավորված տեղեկատվությունը պետք է լինի այնպիսին, որ այն համադրվի ներքին վերահսկողության տեղեկատվության հետ: Բացի այդ, կարեոր է նաև ապրանքային միավորների հաշվառումը ըստ իրենց սահմանված վաճառքի զների, հակառակ դեպքում իրացման գործընթացի նկատմամբ անհնար կինի սահմանել հսկողություն:

Առևտրային ցանցերի գործունեության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հաշվապահական հաշվառման տեղեկատվությունը առնվազն պետք է ապահովի

- յուրաքանչյուր ապրանքային պաշարի (ապրանքի, արտադրանքի) անալիտիկ հաշվառումը ըստ առանձին առևտրային սրահների,
- յուրաքանչյուր առևտրային սրահի ապրանքային մնացորդի հաշվառված մեծությունը ըստ վաճառքի գների,
- վաճառքի գներից տարբերվող գներով իրացման վերաբերյալ տեղեկատվության,
- դեբիտորներ, կրեդիտորների անալիտիկ հաշվառում՝ ըստ առաջացման աղյուրների (օրինակ դեբիտորների դեպքում՝ թե որ առևտրային սրահից է կատարվել իրացումը, կրեդիտորների դեպքում՝ թե ինչպիսի ապրանքների մատակարարումից, որ պահեստը կամ սրահն է եղել անմիջապես բեռնարափման վայրը և այլն),
- վաճառքի կետների (առավել հաճախ այն նույնականացվում է առևտրային սրահի առանձին դրամարկղային կետերի հետ, որտեղ կատարվում է վճարումը գնորդի կողմից, POS) դրամական միջոցների հաշվառում՝ մուտքային մասով համադրելի վաճառված ապրանքների գումարների հետ, իսկ ելքային մասով՝ ըստ համապատասխան ուղղությունների և այլն:

Թվարկումը կարելի է շարունակել, սակայն բավարարվենք նվազագույնով:

Նման պահանջների բավարարմանը առավել բարձր մակարդակով կարելի է հասնել ավտոմատ համակարգերի ներդրմամբ, ֆինանսական հաշվառման պատշաճ կազմակերպմամբ, և օպերատիվ հաշվառմամբ՝ **հիմք ընդունելով հաշվառման մանրածախ մեթոդը**:

Ինքնարժեքի որոշման տեսանկյունից կիրառվող մանրածախ մեթոդի տարրերից օգտագործվում է առևտրային հավելագինը, իսկ առհասարակ ապրանքային հաշվառման տեսանկյունից մանրածախ հաշվառման ողջ գործիքակազմը:

Մանրածախ հաշվառման գործիքակազմի մեթոդական հիմքը՝ ցուցանիշների սկզբնական և վերջնական մնացորդների միջև կապերի արտացոլումն է՝ ըստ այնպիսի հատկանիշներ կրող հաշվարկային մեծությունների, որոնք համադրելի են մեկ այլ ցուցանիշի հաշվարկման մեջ, ողջ գործիքակազմը իրենից ներկայացնում է միևնույն ցուցանիշի երկու տարրեր ժամանակաշրջանների մնացորդների միջև թվաբանական-հաշվարկային կապը:

Ապրանքային պաշարների մնացորդի հաշվառման տեսանկյունից մի քանի եղանակներ կամ մոտեցումներ կան, դրանք են՝

- գուտ անալիտիկ հաշվառում,
- քանակագումարային հաշվառում ըստ ինքնարժեքի (սինթետիկ հաշվառում),
- քանակագումարային հաշվառում ըստ վաճառքի գների (հավելագին մեթոդ),

Սակայն մեր կողմից առաջարկվում է կիրառել գուտ գումարային մեթոդը:

Չուտ անալիտիկ կամ քանակային հաշվառումը հասուն է օպերատիվ հաշվառմանը, եթե ապրանքանյութական միավորների հաշվառումը վարվում է ըստ անալիտիկ քարտերի, արտահայտված բնեղեն չափիչներով:

Քանակագումարային հաշվառումը ըստ ձևավորված փաստացի ինքնարժեքների հասուն է ֆինանսական հաշվառմանը, եթե միավորների հաշվառման հաշվառման հաշվառումը տարվում է և անալիտիկ, և սինթետիկ հաշվառների միջոցով:

Քանակագումարային հաշվառումը ըստ վաճառքի գների և գուտ գումարային հաշվառման եղանակները կրում են յուրահատուկ բնույթ, դրանք հասուն են միայն հաշվառման մանրածախ մեթոդին, որոնք կիրառելի են միայն առևտրային բնագավառում:

Քանակագումարային հաշվառումը ըստ վաճառքի գների հաշվառման եղանակի հիմնաքարը՝ ապրանքային միավորների, ապրանքաշրջանառության և մնացորդի հաշվառումն է ոչ թե ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով, ինչպես ընդունված է ֆինանսական հաշվառման, կամ փաստացի ձևավորված արժեքով, ինչպես ընդունված է հարկային հաշվառման մեջ, այլ հաշվառումն է՝ արտահայտված վաճառքի գներով:

Իսկ գուտ գումարայինի դեպքում հաշվառումը ապահովում է միայն ապրանքային մնացորդը և շրջանառության մեծությունը գումարային տեսքով, այս դեպքում էական չէ անալիտիկ հաշվառումը:

Չուտ գումարային մնացորդի մեծությունը օգտագործվում է որպես հակակշիռ, չնայած ունենալով կիրառության սահմանափակ շրջանակներ, այն ապահովում է վերահսկողական ֆունկցիա տեղեկատվական հոսքերի նկատմամբ, կարող է կիրառվել ներքին ստուգումների ժամանակ:

Մանրածախ մերոդի ներդրման նպատակահարմարությունը խիստ սուրյեկտիվ որոշում է, քանի որ կախված է կառավարման կառուցվածքային բնույթից, օրինակ, այս եղանակի ներդրումը և հետագա վարումը կիմի անհնաստ, եթե կազմակերպության գործունեության մեջ ընդունված չէ գույքագրումների անցկացումը ներքին վերահսկողության նպատակներով, կամ առևտրային սրահներին տրված են այնչափ լիազորություններ, որոնք ինքնուրույն կերպով կարող են կազմակերպել իրենց առևտրային գործընթացը, և հետևաբար նրանցից պահանջվում է ապահովել որոշակի շահութաբերության մակարդակ և այլն: Հետևաբար պետք է լինեն այնպիսի հանգամանքներ, որոնց արդյունքում մանրածախ հաշվառման մերոդի ներդրումը ապահովի աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

Առևտրային գործունեությունը ենթադրում է կատեգորիաներ, որոնցում տեղի ունեցող փոփոխությունները հանդիսանում են մանրածախ հաշվառման առարկան, դրանք են՝

- առևտրային սրահների, պահեստների, բազմաների ապրանքային շրջանառությունը,
- դրամական միջոցների հոսքերը,
- վաճառքների գծով դերիտորական պարտքերը:

Տնտեսական գործունեության հաշվառման հաշվառումը ներառում է բազմաթիվ այլ տնտեսական կատեգորիաներ՝ ներառելով կազմակերպության ակտիվները և պասիվները, սակայն առևտրային սրահների տեսանկյունից տնտեսական միջոցների կազմը ներառում է միայն վերոհիշյալ թվարկվածը, հետևաբար բվարկումը ոչ թե պայմանական բնույթ է կրում, այլ՝ օրյեկտիվ:

Մանրածախ հաշվառման մերոդի կիրառությունը ենթադրում է գործառնությունների դասակարգված գրանցումներ կատարելու ընթացակարգեր, որոնց արդյունքները օգտագործվում են հաշվարկային բանաձևերում, իսկ արդյունքում ստացված մեծությունները կծառայեն որպես փաստացի արդյունքների հետ համարման լավագույն տարրերակ:

Մանրածախ հաշվառման մեջ առաջարկում ենք օգտագործել հետևյալ երեք հիմնական հաշվարկային բանաձևերը՝

- *Ապրանքային մնացորդի,*
- *Դրամարկղի մնացորդի,*
- *Դերիտորական պարտքերի:*

Ապրանքային մնացորդի հաշվարկային բանաձևում օգտագործվող ցուցանիշները

	Ցուցանիշի կամ բանաձևի նկարագրությունը	Հաշվարկային բանաձևը
<i>Q</i>	<i>ապրանքատեսակի մնացորդի բանակն է քննողեն չափիով</i>	
<i>P</i>	<i>տվյալ ամսարկի դրությամբ տվյալ միավորի սահմանված վաճառքի գինը (այսուհետ ՝ վաճառքի գին)</i>	
<i>I₀</i>	<i>Ապրանքային մնացորդ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ</i>	<i>I₀=□Q*P</i>
<i>I₊</i>	<i>Ապրանքային մնացորդի ավելացումներ՝ ձեռքբերումներ, մուտքեր</i>	
<i>I₋</i>	<i>Իրացման ծավալ և այլ ելքեր</i>	
<i>I_t</i>	<i>Ապրանքային մնացորդ ժամանակաշրջանի վերջին դրությամբ</i>	<i>I_t= I₀ + I₊ - I₋</i>

Սակայն առևտրային սրահների մուտքային և ելքային գործողությունների նման խոշոր դասակարգումը բավարար չէ՝ ներկայացնենք առավել մանրածախ:

	Ցուցանիշի կամ բանաձևի նկարագրությունը	Հաշվարկային բանաձևը
<i>I₊</i>	<i>Ապրանքային մնացորդի ավելացումներ՝ ձեռքբերումներ, մուտքեր</i>	<i>I₊=M₁+M₂+P₊+D₊+R₊</i>
<i>M₁</i>	<i>Ձեռքբերումներ (հնարավոր է նաև վերադարձ գնորդից դեպքը, որը կարող ենք դիտարկել</i>	<i>ձեռքբերման ապրանքային բանակ X տվյալ պահին գործող վաճառքի գին</i>

	որպես ձեռքբերում)	
M_2	Ներքին տեղաշարժեր	այլ սրահներից կամ պահեստից ստացման ապրանքային միավորների քանակ X տվյալ պահին գործող վաճառքի զին
P_+	Վաճառքի գների քանակացում, վաճառքի գների փոփոխություն սահմանելու դեպքում	(նոր զին – վաճառքի զին) X փոփոխվող զինը կրող ապրանքային մնացորդ՝ առ գների փոփոխության ամսարժի դրույթամբ
D_+	Բացասական զեղչեր, վաճառքի գնից բարձր գնով իրացնելու դեպքում	(վաճառված զին – վաճառքի զին) X իրացված ապրանքների քանակ
R_+	Գույքագրմանք բացահայտված ավելցուկ	ավելցուկ ապրանքային միավորների քանակ X տվյալ պահին գործող վաճառքի զին

Նույն կարգով ներկայացնենք ելքային գործառնությունները՝

	Յուցանիշի կամ բանաձևի նկարագրությունը	Հաշվարկային բանաձևը
I	Իրացման ծավալ և այլ ելքեր	$I = S + D + M_+ + P_+ + R_+$
S	Իրացված ապրանքների գումար (հնարավոր է նաև վերադարձ մատակարարին դեպքը, որը կարող ենք դիտարկել որպես իրացում)	իրացման քանակ X վաճառված զին
	Իրացման ծավալը հաշվի առնելիս ցանկալի է անտեսել ԱԱՀ	
D	Զեղչեր, վաճառքի գնից ցածր գնով իրացնելու դեպքում	(վաճառքի զին - վաճառված զին) X իրացված ապրանքների քանակ
M_-	Ներքին տեղաշարժեր	այլ սրահներ կամ պահեստ տեղափոխված ապրանքային միավորների քանակ X տվյալ պահին գործող վաճառքի զին
P_-	Վաճառքի գների իջեցում, վաճառքի գների փոփոխություն սահմանելու դեպքում	(նոր զին – վաճառքի զին) X փոփոխվող զինը կրող ապրանքային մնացորդ՝ առ գների փոփոխության ամսարժի դրույթամբ
R_-	Գույքագրմանք բացահայտված պակասորդ	պակասորդ ապրանքային միավորների քանակ X տվյալ պահին գործող վաճառքի զին

Առևտրային կազմակերպության դրամարկային գործողությունների տարանջատումը ըստ դրամական հոսքերի բնույթի կատարվում է համաձայն ՀՀՍՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի, որի պահանջների կատարումը պարտադիր է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար։ Եթե դրամական հոսքերի բնույթը ուսումնասիրներ առևտրային կետերի կամ սրահների մակարդակով, ապա այսուեղ դրամական հոսքերի դասակարգումը առավել ընդգծված է արտահայտվում։ Դրամական հոսքերը մուտքային մասով արտահայտվում են հաճախորդների կողմից վճարումների և դեբիտորի մարումների տեսքով, իսկ ելքային մասով՝ ընթացիկ ծախսերի, մատակարարներին վճարումների կամ գլխավոր դրամարկային գումարի հանձնման տեսքով։

Դրամարկային մնացորդի հաշվարկային բանաձևում օգտագործվող ցուցանիշները

	Յուցանիշի կամ բանաձևի նկարագրությունը	Հաշվարկային բանաձևը
C_0	Դրամարկային սկզբնական մնացորդ	
C_{in}	Կանխիկ մուտքեր	
C_{out}	Կանխիկ ելքեր	
C_I	Դրամարկային վերջնական մնացորդ	$C_I = C_0 + C_{in} - C_{out}$
C_{inD}	Կանխիկ մուտքեր դեբիտորներից	$C_{inD} = C_{inS} + C_{inD}$
C_{inS}	Կանխիկ մուտքեր վաճառքից	

Դրամարկղի ելքերը կարող են դասակարգվել ըստ նպատակային ուղղությունների, որոնց ընտրությունը կախված է կոնկրետ կազմակերպության վարած ներքին քաղաքականությունից, օրինակ, եթե բույլատրովում է կատարել վճարումներ մատակարարներին, կատարել ընթացիկ ներքին ծախսեր, վճարել աշխատավարձ և այլն: Սակայն զիսափոր դրամարկղ գումարի հաճանումը հասուկ է բոլոր առևտրային կետերին, անկախ իրականացնան ձևերից՝ ինկասացիոն, բանկային փոխանցմանը և այլն:

Կարենոր է հիշել, որ ներկայացված հաշվարկային բանաձևերում չին քննարկվում անկանխիկ գործառությունները, իսկ դրամն առկայության դեպքում մոտեցումները նույն են:

Դերիտորական պարտքերի հաշվարկային բանաձևի կառուցման եղանակը նույն է ինչ որ սինթետիկ հաշվառման մեջ:

Դերիտորական պարտքերի մմացորդի հաշվարկային բանաձևում օգտագործվող ցուցանիշները

	Ցուցանիշի կամ բանաձևի նկարագրությունը	Հաշվարկային բանաձևը
D_0	Վաճառքների գծով դերիտորական պարտքերի սկզբնական մնացորդ	
SD	Իրացման ծավալ՝ հետաձգված վճարումով	
C_{inD}	Վճարումներ դերիտորներից	
D_I	Վաճառքների գծով դերիտորական պարտքերի վերջնական մնացորդ	$D_I = D_0 + SD - C_{inD}$

Վերոհիշյալ բանաձևերը հիմք են ծառայում առևտրային սրահների ակտիվների գուտ գումարային մնացորդի որոշման համար: Այսպես, առաջարկվում է թվարանական կտրվածքով գումարել վերոհիշյալ երեք հաշվարկային բանաձևերը, որոնց հանրագումարը իրենից կներկայացնի «առևտրային ցանցի ակտիվները», այսինքն, կունենանք առևտրային սրահի միկրոհաշվելիքին, սակայն բացի գուտ թվարանական գումարումից, այստեղ ի հայտ է գալիս գուտ գումարային մեթոդի առավելությունը, երբ ապրանքային մնացորդը որևէ ամսաթվի դրույթամբ կարելի է ստանալ արտահայտված ապրանքների վաճառքի գներով, չօգտագործելով իրացման ծավալի ցուցանիշը: Հենց այս մոտեցման մեջ է կայանում գուտ գումարային մեթոդը հաշվառման առավելությունը, քանի որ այն հակալում է հաշվառահական տեղեկատվական հոսքերին:

Չուտ գումարային մեթոդով մանրածախ հաշվառման բանաձևի կառուցման ուղղությունը հետևյալն է. եթե հիմք վերցնենք ապրանքային մնացորդի, դրամական միջոցներ և դերիտորական պարտքերի հաշվարկային բանաձևերը:

1. $D_I = D_0 + SD - C_{inD}$
2. $C_1 = C_0 + C_{inS} + C_{inD} - C_{out}$
3. $I_1 = I_0 + M_1 + M_2 + P_+ + D_+ + R_{+-} - S - D - M_- - P_- - R_-$

ապա դրամն հանրագումարը իրենից կներկայացնի առևտրային սրահի ակտիվների հանրագումարը՝

4. $D_I + C_1 + I_1 = D_0 + SD - C_{inD} + C_0 + C_{inS} + C_{inD} - C_{out} + I_0 + M_1 + M_2 + P_+ + D_+ + R_{+-} - S - D - M_- - P_- - R_-$

Հաջորդ քայլի ընթացքում կրճատվում է միևնույն ցուցանիշը, որը ունի տարբեր թվարանական նշաններ, այսինքն՝ C_{inD} ցուցանիշը:

5. $D_I + C_1 + I_1 = D_0 + SD + C_0 + C_{inS} - C_{out} + I_0 + M_1 + M_2 + P_+ + D_+ + R_{+-} - S - D - M_- - P_- - R_-$

Հիմք ընդունել, որ իրացման փաստացի ծավալը արտահայտվում է համարժեք դրամական մուտքի կամ դերիտորական պարտքերի աճի տեսքով, այսինքն՝

6. $S = SD + C_{inS}$

Տեղադրելով այն 5. բանաձևում, կստանանք՝

7. $D_I + C_1 + I_1 = D_0 + SD + C_0 + C_{inS} - C_{out} + I_0 + M_1 + M_2 + P_+ + D_+ + R_{+-} - SD - C_{inS} - D - M_- - P_- - R_-$

\Rightarrow

8. $D_I + C_1 + I_1 = (D_0 + C_0 + I_0) + M_1 + (M_2 - M_-) - C_{out} (+P_+ - P_-) + (D_+ - D_-) + (R_{+-} - R_-)$

Հաշվի առնելով, որ գործնականում առևտրային սրահներում դրամարկղի մնացորդները օրվա վերջին գրեթե միշտ կամ զրոյացվում են՝ մնացորդը հանձնվում է զվարկոր դրամարկղ, կամ նվազեցվում են մինչև սահմանված չափը, կարելի է ասել, որ այն ժամանակաշրջանի տարբեր պահերի կրում է միևնույն մեծությունը, հետևաբար այն անտեսվում է:

$$9. D_1+I_1=(D_0+I_0)+M_1+(M_2-M_-)-C_{out}+(P_+-P_-)+(D_+-D_-)+(R_+-R_-)$$

Հետևաբար, առևտրային սրահի ակտիվների մնացորդը կարելի է հաշվարկել ժամանակաշրջանի կտրվածքով հետևյալ տրամաբանությամբ՝

1. Ապրանքային և դեբիտորական պարտքերի մնացորդ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ + D_0+I_0
2. ձեռքբերումներ արտահայտված վաճառքի գներով + M_1
3. սրահների միջև ներքին տեղաշարժերի գուտ գումար M_2-M_-
4. դրամարկղից ելքագրված գումարներ $-C_{out}$
5. վերագնահատումների տարբերություն P_+-P_-
6. առևտրային գեղշերի տարբերություն D_+-D_-
7. գույքագրման արդյունքներ R_+-R_-

Վերոհիշյալ գուտ գումարային բանաձնը կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների՝ կախված առևտրային ընկերության վարած մենեջմենտից: Հետևաբար, հիմք ընդունելով այն ենթադրությունը, որ առևտրային սրահներում հետաձգված վճարումով իրացումը առհասարակ տարածված բնույթ չի կրում, առավելս կարելի է ասել, որ հազվադեպ է հանդիպում պրակտիկայում, ապա առաջարկվող հաշվարկային բանաձնը կարող է ազատվել դեբիտորական պարտքի մնացորդի ցուցանիշից:

Այսպիսով, ՀՀ առևտրային սրահների ապրանքային մնացորդի որոշման համար այլընտրանքային մոտեցում կարող է ծառայել մեր կողմից առաջարկվող հաշվարկային բանաձնը, որի էական տարբերությունը և առավելությունը կայանում է հետևյալի մեջ՝

- մնացորդի որոշման ժամանակ չի օգտագործվում իրացումից հասույթի մեծությունը,
- մնացորդը արտահայտվում է վաճառքի գներով՝ գուտ գումարային տեսքով, ինչպես մանրածախ մերողի կիրառության ժամանակ,
- օգտագործվող տեղեկատվության շրջանակները կրում են հասանելի բնույթ:

Անփոփելով, նշենք, որ առաջարկվող հաշվարկային բանաձնը հիմք է համուսանալու ներքին վերահսկողական համակարգում որպես այլընտրանք կամ հակաշիռ արդեն իսկ ձևավորված տեղեկատվական հոսքերին և հաշվետվություններին, հնարավորություն է ընձեռնելու գույքագրման անցկացման ընթացակարգերի կրծատմանը, գույքագրման արդյունքներին էքսպրես գնահատմանը, մանրածախ հաշվառման մեթոդով որոշված տեղեկատվության հավաստիության ստուգմանը և այլն:

**Վարդան Սարկիսյան
Ալվարդ Սարկիսյան
Լիանա Գրիգորյան
Լևոն Սաակյան**

Альтернативная модель учета товарных запасов в крупных торговых сетях

Аннотация

Наряду с внедрением финансового учёта всё больше возрастает роль бухгалтерской информации, которая своими особенностями проявляется в коммерческих организациях Республики Армения. В настоящее время основные положение бухгалтерского учёта определяются международными стандартами финансовой отчётности. Но внедрение МСФО связано с некоторыми трудностями, так как бухгалтерский учёт более широкое понятие и включает в себе финансовый учёт. Учитывая особенности бухгалтерского учёта товарных запасов мы предлагаем такие методические подходы, которые являются альтернативными к существующим механизмам учёта и источникам информации. Используя некоторые инструменты

розничного метода учёта формируются новые подходы, с помощью которых решаются ряд задач финансового и управленческого учёта, включая ряд задач внутреннего контроля. С помощью предлагаемого метода можно усовершенствовать методы инвентаризации и контроля на коммерческих организациях Республики Армения. Новый подход является сочетанием розничного метода учёта и синтетического учёта.

**Vardan Sargsyan
Alvard Sargsyan
Liana Grigoryan
Levon Sahakyan**

Alternative model of inventory accounting in large trade networks

Abstract

Along with the introduction of financial accounting in the Republic of Armenia accounting related information obtains new qualitative characteristics, which comes forth with its peculiarities in trade networks. Currently, the main approaches of accounting are defined by the International Financial Reporting Standards (IFRS). However, the adoption of IFRS does not mean that all main issues related accounting may be addressed, for the scope of accounting is wider than that of financial accounting. Subject to the peculiarities of inventory accounting in trade networks of the Republic of Armenia, as an addition to the existing accounting toolkit we propose methodological solutions, which will serve as an alternative to the existing accounting mechanisms and information sources. As a result of the proposed methodological solution, a powerful toolkit is designed by using some tools of retail method of accounting, through which a number of financial and managerial accounting issues are solved, including several internal supervision related issues as well. With the help of the proposed method for inventory accounting, it is possible to optimize the inventory and supervision functions in trade networks of the Republic of Armenia. This approach by its nature may be considered as a specific combination of retail method of accounting and synthetic accounting.